ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում 19-Ремонт-2017-МЭК ծածկագրով իրականացված առանց որակավորման նախնական ընտրության Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգման և մաքրման բաց միափուլ մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> Ընկերության կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«ՄԷԿ» ՓԲԸ Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգման և մաքրման առանց որակավորման նախնական ընտրության բաց միափուլ մրցույթ

Ընկերության 2017 թվականի գնումների պլանի 19-Ремонт-2017-МЭК կետի հիման վրա, տնօրենի 2017 թվականի փետրվարի 1-ի №24 Հրամանի համաձայն, Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է առանց որակավորման նախնական ընտրության բաց միափուլ մրցույթ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ կարիքների համար Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգման և մաքրման՝ պայմանագրի կնքման իրավունքով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2017 թվականի մարտի 14-ը:

Հայտարարությունն Ընկերության կայքում և ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի փետրվարի 1-ին:

Մրցույթի հայտարարումից հետո, համապատասխան կարգով հայտ են ներկայացրել երեք մասնակից՝ «Զենոն» ՍՊԸ-ն, «Իմանի Հոլդինգ» ՍՊԸ-ն և «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ն: Մրցութային հանձնաժողովը ներկայացված հայտերը համարել է ըստ էության մրցութային պայմաններին բավարար: Համաձայն գնահատման չափանիշների և ընթացակարգերի՝ հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

Զբաղեցրած տեղ	**Ընկերության անվանումը**	**Առաջարկած գինը հազ. դրամ ներառյալ ԱԱՀ**
1	**2**	**3**
Առաջին	«Ռեմ Գրուպ» ՍՊԸ	12 309
Երկրորդ	«Զենոն» ՍՊԸ	12 992
Երրորդ	«Իմանի Հոլդինգ» ՍՊԸ	13 201

Հաղթող է ճանաչվել առաջին տեղը գրաված մասնակիցը:

Պայմանագրի կնքման իրավունքով՝ առանց որակավորման նախնական ընտրության «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ կարիքների համար Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգման և մաքրման բաց միափուլ մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. Հայտ ներկայացրած մասնակիցները չեն ներկայացրել մրցութային փաստաթղթերի 4.5.2.1 կետով պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, մասնավորապես.
   - նյութատեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանք,
   - կադրային ռեսուրսների մասին տեղեկանք,
   - աշխատանքների կատարման ժամանակացույցը,

   Ինչ վերաբերվում է պահանջված տեղեկանքներին՝ հարկային մարմիններից՝ հարկերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ կատարելու մասին և դատական մարմիններից՝ լուծարման գործընթացում կամ սնանկ չլինելու մասին, ապա երեք մասնակիցներն էլ նշված տեղեկանքների փոխարեն ներկայացրել են երաշխավորագրեր ընկերությունների տնօրենների անունից, այնինչ անհրաժեշտ էր ներկայացնել պահանջվող տեղեկանքը, իսկ անհնարինության դեպքում բացակայության պատճառը բացատրող և տվյալ պահանջներին մասնակցի համապատասխանության վերաբերյալ հավաստիացնող, կամայական ձևով կազմված տեղեկանք: Հետևաբար, ներկայացված երեք մասնակիցների փաթեթներն էլ կարելի է համարել թերի, այնինչ մրցութային հանձնաժողովի կողմից հայտերը համարվել են մրցութային պայմաններին բավարար:
2. Մրցութային փաստաթղթերի 5.3.1 կետում սահմանված է, որ մրցույթի հաղթող ճանաչված Մասնակիցը պարտավոր է պայմանագիր կնքել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ ապահովագրական կազմակերպության հետ, որը հանդիսանում է Ընկերության շահերի ապահովագրողը, ներկայացնելով ապահովագրման ծավալը՝ կապալի պայմանագրին կից հավելվածով, ապահովագրել շինմանտաժային ռիսկերը, քաղաքացիական պատասխանատվությունը երրորդ անձանց առջև՝ շին-մոնտաժային և այլ աշխատանքներ իրականացման ժամանակ:

   Հաշվի առնելով, որ Ընկերության ապահովագրության կազմակերպման կարգի 5.7.3 կետով սահմանված է, որ մինչև 20,0 մլն ՀՀ դրամի, առանց ԱԱՀ աշխատանքները ապահովագրման ենթակա չեն, ապա տվյալ կետը՝ հատկապես առանց նշված կետին հղում կատարելու, ավելորդ

պահանջ է, քանի որ մասնակիցները հայտ ներկայացնելուց տվյալ ծախսերը կներառեն առաջարկվող գնի մեջ, իսկ ինչ վերաբերվում է տվյալ փուլում պարտադիր «Ռոսգոստրախ-Արմենիա» ՓԲԸ-ի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու պահանջը չհիմնավորված է, քանի որ այդպիսով սահմանափակվում են մրցույթի հաղթող մասնակցի մրցակցային շուկայում ազատ ընտրության հնարավորությունը:

3. Մրցութային փաթեթում, մրցութային հայտերի գնահատման չափանիշներում առկա է նշում, համաձայն որի՝ անբարեխիղճ կոնտրագենտների մասնակցությունը բացառելու համար, մասնակիցները, որոնց գնային առաջարկները էապես տարբերվում են միջին առաջարկած գնից, մերժվում են հետագայում մրցույթի մասնակցությունից:

Այս պայմանն անթույլատրելի է, անհրաժեշտ է Մասնակցից պահանջել համապատասխան հիմնավորումներ նման գնային առաջարկի համար և մեկնաբանությունները ստանալուց հետո միայն որոշում կայացնել:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Գնման անվանումը «ՄԷԿ» ՓԲԸ Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգման և մաքրման»

Գնման ծածկագիրը 19-Ремонт-2017-МЭК

Գնման ձևը Առանց որակավորման նախնական ընտրության բաց միափուլ մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
5	Ձեռնարկվել են բավարար միջոցառումներ ոչ մրցակցային եղանակով գնումների ծավալը նվազեցնելու ուղղությամբ	☑	☐	☐	
6	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	
7	Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	☑	☐	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
8	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☐	☑	☐	Անբարեխիղճ կոնտրագենտների մասնակցությունը բացառելու նպատակով, այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկները էապես տարբերվում են միջին առաջարկած գնից, մերժվում են:
9	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	

10	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	
11	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
12	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐	
13	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐	
14	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
15	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
16	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
18	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
19	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
20	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☑	☐	☐	Համաձայն ներկայացված կատարված աշխատանքների ակտի՝ կապալառուն աշխատանքներն ավարտել է սահմանված ժամկետում: Վերջնաժամկետ էր սահմանված 16.04.2017 թ.:
21	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները: